ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ԺԱՄԱՆԵՑ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Ռուսաստանի ու Ղազախստանի դիտորդների յանձնախումբը, 15 օր ուշացումով, վերջապէս հասաւ Ստեփանակերտ:

Դիտորդների յանձնախումբը բաղկացած է 14 հոգուց, 7ը՝ Ռուսաստանից, 7ը՝ Ղազախստանից: Յանձնախմբի մէջ կայ նաեւ ԽՍՀՄ պաշտպանութեան նախարարութեան երկու ներկայացուցիչ:

Երէկ յանձնախումբը գտնւում էր Բաքւում, որտեղ արժանացել է հանրապետութեան նախագահ Այազ Մութալիբովի ընդունելութեանը եւ, եթէ հաւատանք Ադրբեջանի հեռուստատեսութեան «24 սահաթ» հաղորդմանը, լսել են վերջին չորս տարուայ ընթացքում «ադրբեջանցիների դէմ հայերի կատարած յանցանքների մասին»:

Ըստ «Ինտերֆաքս» գործակալութեան հաղորդման, մինչեւ Ստեփանակերտ ժամանելը, դիտորդները խորհրդակցել են Ադրբեջանի եւ Հայաստանի ղեկավարութեան հետ: